ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առակրության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4
ՀՀ արդարադատության նախարարություն 05 դեկտեմբերի 2023թ. № 06/27.1/51382-2023 պետական փորձագիտական եզրակացություն	1.Նախագծի 1-ին կետում «Գառնի» բառից առաջ անրաժեշտ է լրացնել «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի» բառերը: 2. Նախագծի 2-րդ կետում «օրվանից» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա» բառերը՝ նկատի ունենալով նախագծի վերնագրի պահանջները: 3.Հավելվածի վերևի աջ	Ընդունվել է:	«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» Գառնի համայնքի ավագանու որոշման նախագիծը լրամշակվել է:

	անկյունում «ՀԱՌՆԻ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ԳԱՌՆԻ» բառով: 4.Հավելվածի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով նախագծի 1-ին կետի պահանջներին: 5.Հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում «1-ին ենթակետով «ա» պարբերություն» բատերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին ենթակետի «ա» պարբերությամբ» բառերով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությանը: 6. Հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում «500-ից», «1000-ից» և «3000-ից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «501-ից»,		

	«1001-ից» և «3001-ից» բառերով: Հիշյալ դիտողությունը բխում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետի պահանջներից: 7. Հավելվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետում «Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլոյին խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների		

	փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝» բառերով՝ համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջների: Նույն կետի 7-րդ ենթակետի «բ» պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝		

	յուրաքանչյուր եռամսյակի համար՝»: 8.Հավելվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու վճարի դրույքաչափը չի սահմանված: 9.Հավելվածի 5-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում կարծում ենք, որ անհրաժեշտ է հստակ նշել փոխհատուցման վճարի չափը: 10.Հավելվածի 5-րդ կետի 15-րդ կետում նշված օրենքի վերնագիրն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին»:		